


1.2.7. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ (սպառողական շուկա)

ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)

	2003թ. հունվար		% -ով՝ ընդհանուրի նկատմամբ	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2002թ. հունվարի նկատմամբ, %	2003թ. հունվար	2002թ. հունվար
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը	51473.1	109.3	100.0	100.0
<i>այդ թվում՝</i>				
մանրածախ ապրանքաշրջանառություն	38112.4	109.8	74.0	73.3
բնակչությանը մատուցված ծառայություններ	13360.7	108.2	26.0	26.7

ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները

(% ընդհանուրի նկատմամբ)



2003թ. հունվարին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի աճ 2002թ. հունվարի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, 9.3% և դրանում 0.7 տոկոսային կետով ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն նվազել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը:

Մանրածախ առևտուր


2003թ. հունվարին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 38112.4 մլն. դրամ, որը 2002թ. հունվարի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, կազմել է 109.8%:

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2003թ. հունվարին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը ընդհանուրի նկատմամբ, %
Ընդամենը	38112.4	100.0
<i>այդ թվում՝</i>		
խանութներ	18888.5	49.6
հանրային սնունդ	338.9	0.9
սպառողական ապրանքների շուկաներ	10993.9	28.8
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1325.7	3.5
կրպակներ	6565.4	17.2

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2003թ. հունվարին

(%-ով ընդհանուրի նկատմամբ)



2003թ. հունվարին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում և կրպակներում իրականացվող առևտուրը՝ 95.6% (36447.8 մլն. դրամ):

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2003թ. հունվարին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 10993.9 մլն. դրամ:


ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2003թ. հունվարին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ % ընդհանուրի նկատմամբ	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	9978.4	11.7	88.3
Արագածոտն	15.2	-	100.0
Արարատ	59.5	10.5	89.5
Արմավիր	117.8	39.5	60.5
Գեղարքունիք	83.4	16.0	84.0
Լոռի	178.8	35.1	64.9
Կոտայք	138.2	10.9	89.1
Շիրակ	180.6	-	100.0
Սյունիք	27.6	1.5	98.5
Վայոց ձոր	54.0	-	100.0
Տավուշ	160.5	24.3	75.7
Ընդամենը ՀՀ	10993.9	12.3	87.7

Հարկ է նշել, որ հանրապետությունում գործող սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում, 2003թ. հունվարին, կազմել է 87.7 %:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալն ըստ մարզերի (ամփոփ)

(% ընդհանուրի նկատմամբ)



2003թ. հունվարին 2002թ. հունվարի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է ք.Երևանի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի նվազում 1.1 տոկոսային կետով:

2003թ. փետրվարի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 33643.0 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 71 օր:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվարին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 3.5% կամ 1325.7¹ մլն. դրամը:

¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

Բնակչությանը մատուցված ծառայություններ


2003թ. հունվարին հանրապետությունում, ըստ ծառայություններ մատուցող կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկի, բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը կազմել է 13360.7 մլն.դրամ, որը 2002թ. հունվար ամսվա նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 8.2%-ով:

Բնակչությանը մատուցված կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 189.7 մլն. դրամ, որը 2002թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 18.9%-ով:

2003թ. հունվարին 2002թ. հունվարի համեմատ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 2.0% հավելաճ, որը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի (5.2%), կենցաղային ծառայությունների (0.1%), փոստային և հեռահաղորդակցության (15.8%), կրթության (3.1%), մշակույթի (16.1%), զբոսաշրջության և էքսկուրսային (6.0%) ծառայությունների սակագների հավելաճով: Միաժամանակ նվազել են բժշկական սպասարկման և առողջարանների ու հանգստյան տների ծառայությունների սակագները, համապատասխանաբար՝ 1.6 և 3.9%-ով:

Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքը 2003թ. հունվարին

(%-ով՝ ընդամենի նկատմամբ)



2003թ. հունվարին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ մաս են կազմել մարդատար տրանսպորտի (4161.6մլն.դրամ) և բնակարանային-կոմունալ տնտեսության (4053.1մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 31.1 և 30.3%:

2003թ. հունվարին խաղատների ծառայությունների ծավալը կազմել է 26.6 մլն.դրամ կամ բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի 0.2%-ը: